ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հուլիսի 7-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մե-րոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առ-թիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

* *
*

**Հուլիսի 8-ին, Երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի մկրտարանի ծխականատար Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

* *
*

**Հուլիսի 14-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Ստեփանոս քհն. Տինկիլյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* *
*

**Հուլիսի 21-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն արք. Քիլենջյանը:

* *
*

**Օգոստոսի 4-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի լուսարար Տ. Նարեկ ավ. քհն. Մատարյանը:

* *
*

**Օգոստոսի 11-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

* *
*

**Օգոստոսի 18-ին, կիրակի.—Վերափոխումն Սուրբ Աստուածածնի:**

Այսոր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առի-թով, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ

գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Հավարտ պատարագի կատարվեց Խաղողօրհնեքի գեղեցիկ արարողությունը:

* *
*

**Օգոստոսի 19-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը:

* *
*

**Օգոստոսի 25-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը:

